# ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

## ԳԱՐԵԳԻՆ Բ. «ՄԵՐ ՄԵԾԵՐԻ ԽՈՍՔԸ ԴԱՐՁՆԵՆՔ ԿՅԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀ»

## ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՎԵՀԱՓԱՌԻ ԱՆՎԱՄԲ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ-ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 26 հունիսի 2000 թ.:**

Կիրակի, հունիսի 25-ին, Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնի օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում նշվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, երջանկահիշատակ Գարեգին Ա-ի մահվան տարելիցը:

Հրնթացս Ս. Պատարագի ներկա հավատացյալներին Հայրապետական Իր խոսքն ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը՝ տարելիցի առիթով իր խոնարհումն ու հարգանքը մատուցելով Գարեգին Ա հոգելույս Հայրապետի հիշատակին:

Հավարտ սրբազան արարողության, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Վեհափառի շիրիմի մոտ տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն: Արարողության ավարտին, հանուն Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի և կիլիկյան ողջ միաբանության, վշտակցության և զորակցության խոսք ասաց Տ. Մեսրոպ եպս. Սարգսյանը:

Երեկոյան, ի ոգեկոչումն հանգուցյալ Վեհափառ Հայրապետի, Գարեգին Բ Կաթողիկոսի բարձր նախագահությամբ Մայր Աթոռի «Ալեք-Մարի Մանուկյան» Գանձատանը տեղի ունեցավ Գարեգին Ա-ի անվան աստվածաբանական-հայագիտական կենտրոնի հանդիսավոր բացումը: Նորին Սրբության նախաձեռնությամբ Մայր Աթոռում գիտական այս կենտրոնի հիմնումը Գարեգին Ա Կաթողիկոսի երազի իրականացումն էր: Ժամանակավորապես Գանձատան շենքում հանգրվան գտած գիտական կենտրոնը հետագայում կունենա իր առանձին և առավել հարմարավետ շենքը: Այսուհետ մտավորականության ներկայացուցիչները կարող են օգտվել

կենտրոնի գրադարանում հավաքված տասնյակ հազարի հասնող գրականությունից և իրենց աշխատանքով, ինչպես Վեհափառ Հայրապետն ասաց, «հաղորդակցվել Գարեգին Ա-ի հետ, որ գրքի մարդ էր, և գիրքը նրա կյանքն էր»:

Հանդիսությունն ավարտվեց Վեհարանի դահլիճում, ուր կրկին հնչեցին հիշատակի խոսքեր:

Վեհարանում շարունակվող հուշ-երեկոյի ընթացքում Երուսաղեմի հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը երանաշնորհ Կաթողիկոսի անվամբ գիտական կենտրոնի բացումը նկատեց որպես իմաստուն որոշում, որ կոչված է հավերժացնելու Մաշտոցյան ոգով ապրած Վեհափառի հիշատակը:

Հիշատակի խոսքեր ասացին նաև ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանը, Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանը, Մեսրոպ արքեպս. Աշճյանը: Իրենց երգով ու ասմունքով Վեհափառ Հայրապետի հիշատակին հարգանքի տուրքը մատուցեցին Մայր Աթոռի և Երևանի կամերային երգչախմբերը, ճանաչված ասմունքողներ:

«*Հուշ-երեկոն որքան հարգանքի տուրք է Վեհափառի հիշատակին, այն առավելաբար ապրողների համար է, որպեսզի մշտապես գիտենանք արժևորել, գնահատել ու մեծարել մեր մեծերին, հատկապես երբ նրանք ապրում են և մեզ հետ են, որպեսզի կարողանանք լսել նրանց պատգամներն ու հորդորները և նրանց իմաստուն խոսքը դարձնենք կյանքի ճանապարհ*»,- եզրափակելով երեկոն՝ ասաց Նորին Սրբությունը:

Մայր Աթոռում ոգեկոչման հանդիսություններին ներկա էին Երուսաղեմի հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Հայ Եկեղեցու բարերար Վաչե Մանուկյանը, երանաշնորհ Կաթողիկոսի հարազատները, Գերաշնորհ և Հոգեշնորհ Հայրեր: